Լոտ 1. ք. Երևան, Ավան, Աճառյան փողոց, 10 շենք, 3 բնակարան հասցեի անշարժ գույք:

Համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 18102021-01-0168 վկայականի «Գրանցման համար հիմք հանդիսացած փաստաթղթերը» բաժնի, գրանցման համար հիմք է հանդիսացել՝ Անշարժ գույքի վաճառքի պայմանագիր՝ 13/10/2021թ.:

Համաձայն նույն վկայականի «Գրանցված իրավունքի սուբյեկտ(ներ)» բաժնի, նշված անշարժ գույքը սեփականության իրավունքով պատկանում է Գևորգ Խաչատուրի Միսակյանին:

Համաձայն նույն վկայականի «Շինությունների բնութագրերը» բաժնում արտացոլված տվյալների, նպատակային նշանակությունը՝ բնակելի, բնութագրերն ըստ առանձին շինությունների.

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ
1	01-002-0018-0091-001-003	Բնակարան	62.9 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան, Ավան, Աճառյան փողոց, 10 շենք, 3 բնակարան հասցեի անշարժ գույքը գտնվում է 2 հարկանի քարե բազմաբնակարան բնակելի շենքի առաջին հարկում:

ք. Երևան, Ավան, Աճառյան փողոց, 10 շենք, 3 բնակարան հասցեի անշարժ գույքի ներքին հարդարումը՝ վատ: Տեղադրությունն ու դիրքը՝ միջինից բարձր, տրասպորտային մատչելիությունը՝ ասֆալտապատ, մեքենաների կայանման հարմարավետությունը՝ բավարար, հեռավորությունը հասարակական սպասարկման օբյեկտներից՝ 200 մ շառավղով, շրջակա միջավայրը՝ բնակելի թաղամաս, բակը՝ կիսաբարեկարգ:

Շենքի կառուցման տարեթիվը՝ 1970-1980-ական թթ.,բնակարանի միջհարկային ծածկը՝ երկաթբետոնե, արտաքին պատերը՝ քարե, արտաքին հարդարումը՝ սվաղած, բնակարանի ներքին ընդհանուր մակերեսը՝ 62.9 քմ:

Սենյակների պատերն ու առաստաղը ներկած են, հատակը՝ մանրահատակ, ընդհանուր վիճակը՝ վատ:

Խոհանոցի պատերը ներկած են (խոնավացած), առաստաղը՝ ներկած, հատակը՝ սալիկապատ, ընդհանուր վիճակը՝ վատ:

Սանհանգույցի պատերը սալիկապատ են, ընդհանուր վիճակը՝ վատ:

Առկա են ենթակառուցվածքներ:

Առկա են կիրառված սահմանափակումներ, այդ թվում «Կրեդո Ֆինանս» ՈՒՎԿ ՓԲԸ-ի գրանցված գրավի իրավունքը:

Լոտի մեկնարկային գինը կազմում է՝ **20,325,978** ՀՀ դրամ:

Ծանոթություն. «**ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՄԱՍԻՆ**» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի իրավակարգավորումների համաձայն, *<u>նոր սեփականատիրոջն է անցնում աղբահանության վճարի գծով նախկին սեփականատիրոջ չկատարած պարտավորությունը կամ գերավճարի իրավունքը:</u>*

Ծանոթություն. **ԳՈՒՅՔԱՀԱՐԿ** - ՀՀ հարկային օրենսգրքում 29.08.2026թ. կատարված փոփոխությունների համաձայն, անհրաժեշտ է գնորդի կողմից հարկերը մարված լինելու

մասին տեղեկանք ներկայացնել պետական գրանցում իրականացնող մարմնին՝ նոր գնորդի անունով իրավունքի պետական գրանցում կատարելու համար: Այսինքն, գույքի ձեռք բերողը կրում է պարտավորություն՝ աճուրդով գնված գույքի գույքահարկի գծով առկա բոլոր պարտավորությունների կատարման՝ պարտքերի վճարման համար, որից հետո նոր կգրանցվի նոր գնորդի սեփականության իրավունքը աճուրդով ձեռք բերված գույքի նկատմամբ: